ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 2.1 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 7 հուլիսի 2009թ.

Հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի, 60 հոդվածի 1-ին կետի, 68 հոդվածի 14-րդ մասի պահանջները,

նկատի ունենալով, որ վեճի առարկա հոդվածի իրավադրույթներն ամբողջապես վերարտադրում են «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի նորմերը, իսկ այդ օրենքն ուժը կորցրել է «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետով,

արձանագրելով, որ «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի սահմանադրականության հարցը քննության առարկա դարձել է ՀՀ սահմանադրական դատարանում՝ հաշվի առնելով նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի պահանջները (20.09.2006թ. ՍԴՈ-647 որոշում),

փաստելով, որ ՀՀ Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն, իսկ օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը կոչված է ՀՀ վճռաբեկ դատարանը,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. «ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի դիմումի հիման վրա՝ «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 4-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 հուլիսի 2009 թվականի
ՍԴՈ- 811